ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԿԱՄ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Աշտարակ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....……3

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ >> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1. 1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆՀԵՆԱԿԵՏ……..6

1.2.<<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ……14

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ……..……..……..……..……..……..……....…...22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……..……..……....….....24

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ …….....……..…26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային բարձրագույն արժեքների ձևավորման ամենակարևոր դարբնոցը դպրոցն է: Ուսումնառության ողջ գործընթացում աշակերտները ձեռք են բերում ոչ միայն բազմապիսի գիտելիքներ, կարողություններ, աշխարհաճանաչողություն, այլև անձնային բարձր որակներ: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Սովորողների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում նրանց զարգացման լայն հնարավորությունների մասին:

Աճող սերնդի կրթության և դաստիարակության քայլերը իրականացվում են դպրոցում: Դպրոցականները պատկերացում են կազմում շրջապատող իրականության մասին տարբեր ճանապարհներով, ձեռք են բերում գիտելիքներ, դրան զուգընթաց կրթվում ու դաստիարակվում են :

Հանրակրթական դպրոցում մանկավարժի խնդիրը ոչ միայն դպրոցականների կողմից որոշակի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովումն է, այլև նրանց մեջ անձնային որոշակի որակների, խորը համոզմունքների, զգացմունքների, սովորությունների, արժեհամակարգի ձևավորումը, որոնք կհամապատասխանեն տվյալ հասարակության պահանջներին և բարոյականության նորմերին: Ողջ մանկավարժական գործընթացը կազմակերպվում և կառուցվում է ուսուցման և դաստիարակության գործընթացների միասնությամբ, որն էլ հնարավորություն է տալիս արտադրելու տվյալ հասարակության համար պիտանի քաղաքացի:

Վերջին տարիներին ուսումնական դասագրքերի խնդիրը հայտնվել է մանկավարժության, հոգեբանության, մասնավոր մեթոդիկաների, առարկայական ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Այսօր արդեն մեծ հետաքրքրություն են առաջացնում այն հարցերը, թե ուսումնական դասագրքերը ի՞նչ տեղ են զբաղեցնում ողջ

կրթական գործընթացում, ի՞նչ ժամանակակից գործառույթներ ունեն, ի՞նչ դեր ունեն սովորողների դաստիարակության գործում և ինչպե՞ս են ազդում կրթության որակի բարձրացման վրա: Հանրակրթական դպրոցում , կարևորելով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, հատկապես մեծ ուշադրություն է դարձվում դասագրքերին և դրանց բովանդակությանը:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամանակակից հասարակությունն ընթանում է կրթության արդիականացման ճանապարհով, որն ուղեկցվում է արժեքների վերագնահատմամբ և արժեքների վերաիմաստավորմամբ: Նշանակալից վերափոխումները ազդել են նաև հանրակրթության և առարկայական պետական չափորոշիչների վրա՝ ուղղված կրթելուն, երկրորդայնացնելով դաստիարակության, արժեկողմնորոշման հիմնախնդիրը: Հանրակրթական դպրոցում որոշիչ է ՀՀ քաղաքացու անձի արժեքային կողմնորոշման, բարոյական դաստիարակության հիմնահարցը, մայրենի լեզվի իմացությունն ու պահպանումը, որի համար հատկանշական է դասագրքերի արժեկողնորոշիչ ուղղվածությունը:

Պետության և ազգի անվտանգության ապահովման համար գերխնդիր է պետական մտածելակերպ ունեցող, ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ համամարդկային և ազգային արժեհամակարգով անհատի ձևավորումը:

Ազգային արժեքների պահպանումն այսօր, երբ տարբեր ժողովուրդներ ու ազգեր ձուլվում անհետանում են, հիմնախնդիր է. վտանգված են սովորողների ազգային արժեհամակարգի ձևավուրումն ու զարգացումը:

Այսօր կրթական համակարգի գերխնդիրն է դասավանդվող առարկաների միջոցով ապահովել ՀՀ քաղաքացու անձի արժեքային բարոյական դաստիարակությունը:

Հետազոտության նպատակը՝

Մոդելավորմամբ առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը հայ գրականության դասագրքերի դերի կարևորմամբ:

Հետազոտության խնդիրները՝

1.Ներկայացնել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրը հանրակրթական դպրոցում:

2.Կարևորել դասագրքերի արժեկողմնորոշիչ նշանակությունը հանրակրթական դպրոցում:

3.Առաջադրել դպրոցականի արժեհամակարգի ձևավորման մոդել:

Հետազոտության մեթոդները՝

❖ գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի ուսումնասիրություն և վերլուծություն,

❖ հարցաթերթիկային հարցում,

ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ >> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

1. 1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԵՆԱԿԵՏ

Անհրաժեշտ է ազգապահպան գործում վկայակոչել հայոց մեծերին, ովքեր բոլոր դարաշրջաններում ջանացել են իրենց անհատականությամբ, ստեղծագործական արգասիքով ամրապնդել ազգային ոգին, հպարտությունը, հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Ժամանակին մեծ լուսավորիչ մանկավարժ Խ. Աբովյանը ճիշտ է արժևորել հայ ազգային կրթության դերը. «Հայ ժողովուրդն ինքնըստինքյան ոչ միայն ամենաքաղաքակրթվածն է, այլև հենց այն ազգությունն է, որի բնավորությունն ու ապրելակերպը նպաստում են, որ նա լուսավորություն տարածի ամենուր, հարևանների մեջ»[1]:

Դարերի հոլովույթում պետականազրկված աշխարհասփյուռ հայերն արտերկրում կարողացել են պահպանել ազգային հոգեկերտվածքը, ոգին, դիմագիծը. «Նրանց բարեպաշտ միտքը երբեք չի այլասերվել», «երբեք չի բթացել դեպի կրթությունն ու կատարելագործությունը խոյացող նրանց ոգին»[2]: Տարագրված հայերն ազգային պատվախնդրությամբ, զոհողություններով շարունակել են պահպանել, զարգացնել դարերով սրբացած ազգային արժեքները, բարքերը, սովորույթները, ավանդույթները՝ հիմնելով մշակութային կրթական հաստատություններ, եկեղեցիներ, դպրոցներ… Հանրակրթական համակարգի բարեփոխումների ոլորտում կարևոր է համարվում արժեհամակարգերի ճիշտ ձևավորումն ու զարգացումը: Այսօր դրա իրականացումը ռազմավարական նշանակություն ունի:

Շատ կարևոր է կրթության ողջ համակարգում համամարդկային, ազգային, մշակութային, հոգևոր-բարոյական արժեքների մարդասիրացման և անձնակողմնորոշիչ մոտեցման խնդիրների լուծումը: «Ժամանակակից պայմաններում կրթության գլխավոր խնդիրներից մեկը հանդիսանում է հոգեպես հարուստ անհատներ դաստիարակելը, ովքեր ունակ կլինեն գնահատել, պահպանել և յուրացնել ինչպես իրենց ազգի, այնպես էլ ուրիշ ազգերի արժեքները»[3]: Մեզ շրջապատող իրականությունը փոխվում է զարմանալի

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950, էջ 87:
[2] Նույն տեղում:
[3] [3] http://reshal.ru/?p=7204:

արագությամբ, փոխվում են նաև արժեքային կողմնորոշիչները, որոնք մեծ նշանակություն ունեն սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորման ու զարգացման գործում: Այսօր հանրակրթության ոլորտում հասարակական տարբեր երևույթներ կորցնում են իրենց իսկական նշանակությունը: Այդ երևույթները (արժեքները) իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն՝ թելադրված հասարակության բնականոն զարգացմամբ և մարդկանց պահանջմունքներով: Ա. Տոնոյանը գրում է. «Արժեքների յուրացումը պահանջում է մեծ ուշադրություն դարձնել ոչ միայն առանձին վերցրած օղակի, այլև դրանց ամբողջ շարքի յուրացման վրա»[4]:

Արժեբանության ոլորտում նորովի է կարևորվում այնպիսի ուղղության դերն ու նշանակությունը, ինչպիսին է մանկավարժական արժեբանությունն իր արժեբանական հիմնական կողմնորոշիչներով: Շատ կարևոր է իրական արժեբանական արժեհամակարգի ճիշտ ընկալման հիմնահարցերի լուսաբանումը, որով էլ պայմանավորված է շրջապատում իրական արժեքների նկատմամբ ճիշտ ու համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Վերջին ժամանակներում շատ կարևոր է վեր հանել արժեքի հատկանիշները, բացահայտել արժեքի էությունը, արժեբանական ընկալումները, առանձնահատկությունները, հիմնական բնութագրիչները, հասկացություններն ու գիտական հիմնավորումները: Հասարակության մեջ տեսականորեն ամրագրված արժեքները վերաիմաստավորվում են մարդկանց առօրյա կյանքում:

Այդ ամբողջ գործընթացի իրականացման մոդելը հետևյալն է.

1.Պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրումն ամենուր և հատկապես հանրակրթության ոլորտում

2.Արժեքների ճիշտ ընկալումը

3.Արժեքների իրացման համար երաշխիքների ապահովումը: Այս համատեքստում կարևոր է ձևավորել և ամրագրել անցյալի արժեքների արժեբանական ժառանգությունը, արդի պահանջներին համապատասխան կիրառելու գործնական ունակությունների ձեռքբերումը, որը և համարվում է հանրակրթության ոլորտի

[4] Ա. Տոնոյան, Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բաղադրատարրերը, Նախաշավիղ, հմ. 8, Երևան, 2010, էջ 48:

հիմնական գերխնդիրը: Այսպիսով ազգային արժեհամակարգով ձևավորված սերունդը կունենա արժանապատիվ ապագա: Հավատարիմ մնանք մեր ազգային արժեհամակարգին, ազգային մտածելակերպին և վստահորեն կերտենք փայլուն ապագա՝ ամրագրելով մեր հաղթանակները: Այսօր շատ կարևոր են դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումն ու զարգացումը: Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման էության բացահայտումը մանկավարժական ներգործության տեսանկյունից ենթադրում է այդ գործընթացի դիտարկումը նրա բովանդակային բաղադրատարրերի ամբողջության մեջ:

Ուսուցման պայմաններում արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը երկկողմանի բնույթ ունի. այդ գործընթացի արդյունավետության վրա ազդում են և՛ արժեքների յուրացման նկատմամբ սովորողների մղումն ու ակտիվ գործունեությունը, և՛ այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի գործունեությունը:

Սովորողների մեջ արժեքային կողմնորոշումների ձևավորման իրականացման գործընթացի բովանդակային կողմը ներառում է նրանց հոգեկանում գերակա արժեքները, ինչպես նաև մանկավարժական ներգործության միջոցների համալիրը, որն ակտիվացնում է դպրոցականի՝ արժեքների յուրացմանը միտված գործունեությունը: Ուսուցման բովանդակության մեջ արժեքների ընտրությունն ու ներմուծումն իրականանում են դրանց համակարգման հիման վրա: «Ինչպես կեցության ձևերն ու միջոցները, այնպես էլ դրանց արժեքները, գոյություն ունեն անթիվ քանակով»[5]- գրում է Ն.Օ. Լոսսկին:

Ըստ Բ. Ս. Գերշունսկու՝ մանկավարժ հետազոտողների խնդիրն է փիլիսոփայական հետազոտությունների հիման վրա գլոբալ, համամարդկային արժեքների վերափոխումն այնպիսի արժեքների, որոնք ձեռք են բերվում կրթության ոլորտում: Վ. Պ. Զինչենկոն անձի գործունեության երեք հիմնական բնագավառների առանձնացման հիման վրա առաջարկում է մանկավարժական գործընթացում իրականացվող հետևյալ արժեքային խմբերը՝ հոգևոր, իմացական, սոցիալական: Գիտնական հետազոտողն այն համոզմանն է, որ դրանք կրթության համակարգում պետք է ստանան տեխնոլոգիական կիրառում:

[x] Шишов С.Е., Кальней В.А. Школа: мониторинг качества образования. - М., 2000.

Սակայն այդ խնդիրը դժվար է իրականացնել այնպիսի բնութագրիչների բացակայության պատճառով, որոնք վերաբերում են առանձին արժեքներին, դրանց այս կամ այն խմբին առնչվելուն, ինչպես նաև հոգևոր և սոցիալական արժեքների համադրմանը: Ն. Ս. Ռոզովի կողմից փորձ է արվել մանրամասնորեն դասակարգել կրթության ոլորտի համար նշանակալի արժեքները: Նա առանձնացնում է՝

1.Մարդասիրական արժեքներ, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին և արժանապատվությանը:

2.Սոցիալական արժեքներ, որոնք վերաբերում են առանձին մարդկանց և խմբերի փոխադարձ գործունեությանը քաղաքական, տնտեսական, իրավական ոլորտում:

3.Մշակութային արժեքներ, որոնք վերաբերում են արվեստին, կրոնին, բարոյականությանը, ազգային և էթնիկ ավանդույթներին:

4.Էկոլոգիական արժեքներ, որոնք վերաբերում են շրջապատող բնությանը, շրջակա միջավայրին:

Մշակութային արժեքների խմբում օրինաչափ է գեղագիտական արժեքների առանձնացումը, քանի որ արվեստի, գրականության, կրոնի ազդեցությունն անձի ներաշխարհի վրա դեռևս լիարժեքորեն չի բավարարում անձի գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկի նկատմամբ նրա հակումները: Ս. Ի. Մասլովի կողմից առաջարկվող դասակարգման մեջ առանձնացվում են արժեքների հետևյալ խմբերը՝ բարոյական, իմացական, կրոնական, գեղագիտական, սոցիալական, նյութական: Այսպիսով՝ արժեքները հարմարեցնում ենք կրթության բովանդակությանը և ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը, մշակված է նաև տարրական կրթության բովանդակության յուրահատկության և կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը: Այս մոտեցումն առավելագույնս արտահայտում է մեր կողմից քննարկվող հիմնախնդրի առանձնահատկությունները:

Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակությունը բնութագրվում է միասնական խնդիրների լուծմամբ: Դպրոցականների տարիքային առանձնահատկությունները արժեքային կողմնորոշումների ձևավորման առումով այնպիսին են, որ հնարավորություն չեն ընձեռում հանրակրթական դպրոցի ուսումնական

գործընթացում ներառել բոլոր արժեքները: Այստեղ առաջնային նշանակություն են ձեռք բերում նրանց հասկացողությանն ու հոգեբանությանը մատչելի, արդիական արժեքները: Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բովանդակության մեջ պետք է արտացոլվեն այնպիսի արժեքներ, որոնք ընտրված են գործառույթների և նրանց ուսուցման նպատակների հարաբերակցության հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների արժեքակողմնորոշիչ և տարիքային առանձնահատկությունները: Արժեքային կողմնորոշումների ձևավորմանն ուղղված գործունեության կազմակերպումը չի սահմանափակվում միայն տվյալ դեպքում կրթության բովանդակության մեջ այս կամ այն արժեքի ներմուծմամբ: Այն ենթադրում է մանկավարժական ներգործության ակտիվ ձևերի ու միջոցների օգտագործումը: Արժեքային կողմնորոշումների ձևավորման նպատակով անձի վրա արտաքին ներգործության բազմազանության մեջ առավել հաճախ են առանձնացվում այդ գործընթացի իմացական, ճանաչողական, աֆեկտիվ և վարքային բաղադրատարրերը. դա բազմիցս արտացոլվել է և՛ մանկավարժական, և՛ հոգեբանական հետազոտություններում: Իմացական բաղադրատարրը համոզմունքների, պատկերացումների, կարծիքների ամբողջությունն է, որը ձևավորվում է իմացական - ճանաչողական գործընթացների, սոցիալական փորձի արդյունքում: Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի իմացական, ճանաչողական և վարքային բաղադրատարրերը ներառում են արժեքային օբյեկտի հետ կապված հույզերը, ապրումները, զգացումները: Վարքային բաղադրատարրը ներկայացնում է անձի վարքային դրսևորումները, դրդապատճառները, կողմնորոշումները, միտումները: Քանի որ այս բնութագրիչները միասնական գործընթացի բաղադրիչներ են, դրանք փոխպայմանավորված են և անձի կառուցվածքում կայուն հարաբերակցության են ձգտում: Բաղադրատարրերից մեկի փոփոխությունը կարող է հանգեցնել անձի արժեքային ողջ համակարգի փոփոխության:

Սովորողների արժեքային կողմնորոշումը սկզբնական շրջանում ձևավորվում է սուր աֆեկտային վիճակների հետևանքով՝ առանց որևէ իմացաճանաչողական էական հիմնավորումների: Այդ տարիքում երեխան բախվում է շատ արժեքների, որոնք անհրաժեշտ է յուրացնել: Ս. Ի. Մասլովը գրում է, որ մի շարք պատճառներով անհնարին է իրականացնել արժեքների յուրացումն իմացական գործընթացների միջոցով: Նախ՝

ժամանակը պարզապես չի բավականացնի, երկրորդ՝ շատ արժեքներ անհասանելի են երեխայի գիտակցությանն ու հասկացողությանը: Այդ տարիքում հուզական ընկալման միջոցով երեխան կարող է յուրացնել շատ արժեքներ: Ըստ Ս. Ի. Մասլովի դպրոցականների կողմից արժեքների յուրացումն իրականանում է երեք աստիճաններով.

1. առաջին աստիճանը կապված է օբյեկտի հուզական ընկալման հետ. սկզբում երեխան ցանկացած օբյեկտ ընկալում է հուզականորեն՝ իր հուզական-զգայական ոլորտի մակարդակի համեմատ,

2. երկրորդ աստիճանը կապված է օբյեկտի անձնական և հասարակական նշանակության գիտակցման հետ,

3. երրորդ աստիճանը իրականանում է դպրոցականի արժեքային կողմնորոշումների մեջ արժեքի ներմուծման, այլ արժեքների հետ նրա հարաբերակցության միջոցով՝ ըստ հուզական անդրադարձի և անձի համար արժեքի նշանակության աստիճանի: Այսպիսով՝ դպրոցականների կողմից արժեքների հուզական ընկալումն իրականանում է ըստ դրանց նշանակության գիտակցման և անձի վարքային դրսևորումների:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման ընթացքում մեծ դեր է խաղում մանկավարժական գնահատումը, որը կանխատեսում և մեծ չափով նախապատրաստում է սովորողների կողմից արժեքների յուրացման աստիճանը: Հուզական-արժեքային հակադրությունների մեթոդի կիրառումը սովորողներին մղում է արժեքների յուրացման երրորդ աստիճանին: Այս մեթոդի էությունն այն է, որ հակադիր արժեքների ցուցադրմամբ սովորողների մեջ համապատասխան հակադիր զգացումներ ձևավորվեն: Դրա շնորհիվ երեխաների մեջ արթնանում են հույզերի, զգացմունքների և դրական արժեքների գիտակցման համոզմունքներ, ապրումներ, որոնք և ձևավորում են անձի արժեքային կողմնորոշումների համակարգը: Դպրոցականների կողմից արժեքների յուրացման այսօրինակ մոտեցումը նպաստում է արժեքային ընտրության առավել գիտակցված և ինքնուրույն իրականացմանը: Ընտրությունը փոխադարձ բարդ համագործակցային գործընթաց է, որում առկա են հուզակամային և ռացիոնալ բաղադրատարրերը, այսինքն՝ արարքի հուզական ընկալումից մինչև տրամաբանական իմաստավորում: Դա

կապակցված է ապրումների ու դրդապատճառների պայքարի հետ և բարենպաստ ազդեցություն ունի արժեքային կողմնորոշումների ավելի խոր ու արդյունավետ ձևավորման վրա:

Արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բովանդակությունը ենթադրում է այնպիսի արժեքների ամբողջություն, որոնք ընտրված են դպրոցում ուսուցման նպատակների, դպրոցականների տարիքային առանձնահատկությունների և նրանց արժեքային կողմնորոշումների ձևավորման առանձնահատկությունների համադրման հիման վրա: «Արժեքները համարվում են մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչ այն դեպքում, եթե նրա մեջ ձևավորված են արժեքային գիտակցությունը, արժեքային հարաբերությունները, դիրքորոշումները: Արժեքային կողմնորոշումը անձի գործունեության և վարքի մեջ որոշակի ուղղվածությունն է դեպի այս կամ այն արժեքը, իսկ յուրաքանչյուր առանձին իրավիճակում անձը ղեկավարվում է արժեքային գիտակցությամբ և արժեքային հարաբերությամբ: Կյանքում մարդու արժեքային կողմնորոշումները ձևավորվում են աստիճանաբար՝ սոցիալական տարբեր գործոնների ազդեցությամբ, իսկ դրա արդյունքը ամրակայվում է անհատական գիտակցության մեջ: Մանկավարժական արժեբանության մեջ մարդը և մարդկային հասարակությունը դիտվում են որպես կեցության բարձրագույն արժեքներ և արժեքային գիտակցության, արժեքային հարաբերության, արժեքային վարքագծի կրողներ»[6]:

Որքան բարձր է մարդու, հասարակության հոգևոր զարգացման մակարդակը, այնքան բարձր է արժեքների կարգավորող նշանակությունը, արդյունքում՝ անձը և հասարակությունը գործունեության և վարքի մեջ ավելի մեծ չափով են ղեկավարվում ներքին կարգավորիչներով՝ արժեքներով: Մարդու արժեքային համակարգը հնարավորություն է տալիս բացահայտելու անձի ներաշխարհը, որի հիմնական բաղկացուցիչները կայուն իմաստ և անձնային արժեքներ ներկայացնող տարրերն են: Արժեքային կողմնորոշումների ձևավորումը բավականաչափ բարդ գործընթաց է և երկար ժամանակ է պահանջում: Այդ գործընթացի ընդգրկման փուլերը Լ. Թորգոմյանը տալիս է հետևյալ հերթականությամբ և բովանդակությամբ.

[6] Լ. Թորգոմյան, Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Երևան, 2009, էջ 116:

- արժեքներ ներկայացնելը
- արժեքների գիտակցումը անձի կողմից
- արժեքային կողմնորոշման ընդունումը
- արժեքային կողմնորոշման իրացումը գործունեության և վարքի մեջ[7]:

Խ. Աբովյանը արժեքային համակարգի մեջ է ներառում հայրենասիրությունը, հավատը և շատ երկերում շեշտը դնում է հայ ժողովրդի միասնական ուժի և հավատի վրա: Մեծ լուսավորիչը բարձրագույն արժեքներ էր համարում լուսավորությունը, գիտելիքը, կրթությունը, գիտությունները, որոնք, կարծում ենք, այսօր էլ արժեքային համակարգի ձևավորման կարևորագույն բաղադրատարրերն են:

«Լևոն Շանթի համար գերագույն արժեք է երեխան, իսկ մանկությունը՝ անհատի զարգացման կարևոր փուլ: Նա համոզված է, որ երեխան իրավունք ունի լինելու այնպիսին, ինչպիսին ինքը կա, և որ ո՛չ ծնողը և ո՛չ էլ ուսուցիչը չպետք է մոռանան, որ երեխան թեև անփորձ է, դեռ տկար, սակայն իր սեփական հոգով, իր սեփական դատողությամբ մարդկային անհատ է»[8]:

Այժմ մարդն ապրում և գործում է այնպիսի պայմաններում, երբ անհրաժեշտ է անընդմեջ սովորել, ուսանել, նոր ու կարևոր գիտելիքներ, արժեքներ ձեռք բերել: Կրթության միջոցով հասարակության մեջ կուտակված հոգևոր արժեքները մի սերնդից փոխանցվում են մյուս սերնդին: Դպրոցը աշակերտներին է փոխանցում բազմաբնույթ արժեքային համալիր, որի շնորհիվ նրանց հոգևոր աշխարհը հարստանում է նոր բովանդակությամբ: Աշակերտների կողմից այդ արժեքների յուրացումը սոսկ գիտելիքների պարզ կուտակում չէ: Դրանց շուրջ նա սիրում է մտորել, գնահատել, իմաստավորել և վերջում յուրացնել: Աստիճանաբար ձևավորվող դպրոցականն իր արժեքային գիտակցությամբ, մարդկային հարաբերություններում դրսևորվող վարքագծով ազդում է հասարակության առանձին անդամների արժեքային գիտակցության վրա՝ ինքն էլ փոխազդեցաբար ազդվելով նրանցից: Երեխան երբեմն ինքն է ընտրում, թե իր արժեքային համակարգ ո՛ր արժեքները ներառի: Ուսուցչի խնդիրն է օգնել երեխային հնարավորինս դրական ու լավ արժեքներ ներբեռնելու արժեքային համակարգ: «Ուսուցչի գործը

[7] Նույն տեղում, էջ 128:
[8] Ա. Թոփուզյան, Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Երևան, 2009, էջ 61:

մշտապես աճող մարդու կրթությունը, դաստիարակությունը և զարգացումն է: Ուսուցիչը պետք է զինված լինի ոչ այնքան տեխնիկայով, որքան կարողություններով»[9]: Չէ՞ որ եթե ուսուցիչը չունենա համապատասխան կարողություններ, ապա ոչ մի տեխնիկա նրան չի կարող օգնել:

Այսպիսով՝ երեխան անհատականության ձևավորման ու սոցիալականացման ճանապարհին յուրացնում է մարդասիրական այնպիսի արժեքներ, որոնք ոչ միայն ազգային, այլև համամարդկային մշակույթի հիմքն են կազմում:

1.2. <<Հայոց լեզու և գրականություն>> առարկաների դերը դպրոցականների արժեհամակարգի ձևավորման գործում

Հանրակրթական դպրոցի աշակերտների մեջ գերակշռում են այնպիսի արժեքներ, որոնք մարմնավորում են ազնվությունը, բարությունը, գթասրտությունը, ճշտապահությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, սերն ու նվիրվածությունը ընտանիքի և

[9] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 78:

ուսուցչի նկատմամբ, որը հաճախ վախից, ցավից ու մենակությունից խուսափելու արտահայտություն է: Դպրոցականի համար մեծագույն արժեք են ուսուցիչը, ծնողները, հաղորդակցումը, շրջապատի կողմից գնահատված լինելը, խրախուսանքը, որոնք նրանց մեջ հաղթահարում են տարբեր բարդույթներ :

Դպրոցականի արժեքային պատկերացումներն առավելապես կայունանում են ուսումնական գործընթացում, նրա համար ձևավորվում է սոցիալական նոր միջավայր: Աշակերտը ուսման միջոցով ճանաչում է աշխարհը, բնության գեղեցկությունները, մարդկային փոխհարաբերությունները:

<< Հայոց լեզու և գրականություն>> առարկաների դասավանդումն ունի ինչպես դիդակտիկական, այնպես էլ դաստիարակչական կարևոր նշանակություն:

Սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորումը նշված առարկաների ուսուցման գործընթացում իրականանում է երեք հիմնական ուղղություններով՝ խոսքային գործունեության ընթացքում, գրական տեքստերի շուրջ աշխատանքների, առաջադրանքների միջոցով՝ գիտելիքների յուրացման, կարողությունների ու հմտությունների տիրապետման գործընթացում:

Անգնահատելի է <<Հայոց լեզու և գրականություն>> առարկաների դերը դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործում, որովհետև այն առաջին հերթին նպաստում է անձի հոգևոր-բարոյական ոլորտի զարգացմանը և ձևավորումանը:

Հայտնի է, որ այդ առարկաների միջոցով ձեռք է բերում գիտելիքներ Հայաստանի, նրա քաղաքների, բնության, հայ ժողովրդի պատմության, սովորությունների, մշակույթի մասին, ինչպես նաև բազմաթիվ աշխարհաճանաչողական և լեզվական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ (ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային), զարգանում է նրանց գրական, գեղագիտական ճաշակը, ձևավորվում է լեզվամտածողությունը: << Հայոց լեզու և գրականություն>> առարկաների միջոցով ուսուցման գործընթացը մասնավորապես կարևոր-վում է լեզվամտածողության, ինչպես նաև արժեհամակարգի ձևավորման իմաստով: Այն ստեղծագործությունները, որոնք ուսումնասիրվում են լեզվի դասերին, այնպես պետք է ուսուցանել, որ դրանք երեխաներին ոչ միայն մայրենի լեզվով կարդալ և պատմել սովորեցնեն, այլև մշակեն ընթերցած ստեղծագործությունը հասկանալու, նրա ենթաշերտերի մեջ

թափանցելու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, պարզ վերլուծություններ կատարելու կարողություններ:

Գրականության դասագրքերում հիմնականում զետեղված են գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց ուսումնասիրման գործընթացն ունի մի քանի առանձնահատկություն.

1.Ստեղծագործությունը ուսումնասիրելիս անհրաժեշտ է սովորողներին օգնել թափանցելու նրա հուզական գունապնակի մեջ՝ կարևորելով ստեղծագործության զգացմունքային ազդեցությունը: Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի՝ ինքնաճանաչման, ինքնաարտահայտման, ինքնաիրացման, ինքնագնահատման ոլորտներին, այնպես էլ մեծ և փոքր խմբերով ուսումնական-ստեղծագործական գործունեության ձևերին:

Գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության վերլուծության շուրջ տարվող աշխատանքների մեջ պիտի բացակայի պատրաստի դատողությունների, կարծիքների ներկայացումը, ցանկալի արդյունքի (այն է՝ սեփական դատողությունները չհարմարեցնել որևէ չափորոշչի) կարելի է հասնել միայն անհատական կամ խմբային (փոքր կամ մեծ) աշխատանքի շնորհիվ:

Ուսուցչի խնդիրն է ոչ թե աշակերտներին սահմանումներ և գիտական եզրույթներ սովորեցնել, այլ նրանց մեջ գեղարվեստական զգացողություններ ձևավորել, նրանց գիտակցությանը հասցնել, որ ստեղծագործությունները, որոնք զետեղված են իրենց դասագրքերում, կամ իրենք ընթերցում են դասից դուրս, իրարից տարբերվում են ոչ միայն իրենց լեզվով ու ոճով, կառուցվածքով ու բովանդակությամբ, այլև դրանց մի մասը ստեղծել է ժողովուրդը, մյուս մասը՝ գրողները: Շահեկան է պատմել այն գրողների մասին, որոնց ստեղծագործությունները ծանոթ են երեխաներին: Կարևոր են ոչ թե այդ գրողների կյանքն ու գործունեությունը, այլ նրանց անձնային նկարագիրը, հայացքները, հոգեբանությունն ու կյանքի այն ուշագրավ հատվածներն ու դեպքերը, որոնք կհետաքրքրեն դպրոցականներին և նրանց համար կդառնան ոգեշնչման աղբյուր: «Դեռևս 19-րդ դ. Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, ավելի ուշ՝ Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ստ. Զորյան, Աթ.

Խնկոյանը և այլք խիստ կարևորում են մատաղ սերնդի հոգևոր սննդի հարցը և ստեղծում են գրքեր, որոնք սնում ու կրթում են հայ մանկանը, դաստիարակում նրան համամարդկային ու ազգային վեհ գաղափարներով»[10]: Գեղարվեստական ստեղծագործությունների ավանդումն ունի առանձնահատկություններ, որոնց հաշվառումից է կախված դրանց արդյունավետ ուսուցումը:

Ն.Ա.Վետլուգինան նշում է, որ երեխայի մոտ ստեղծագործելու ունակությունները կարող են ի հայտ գալ կերպարավորման, երաժշտական, գեղարվեստական, բանասիրական և թատերական գործունեությունում: Հետևաբար կարելի է առանձնացնել մանկական ստեղծագործության հետևյալ տեսակները՝ գեղարվեստական, բանասիրական, թատերական և երաժշտական ստեղծագործություններ:

Ն. Դ. Լևիտովը նշում է, որ դպրոցական տարիքի սկզբնական շրջանում հեքիաթները մեծ ազդեցություն են ունենում երեխաների զարգացման գործում, որի նշանակությունն այս տարիքում բարոյական դաստիարակության համար չպետք է չգնահատել, քանի որ դրանք մեծ դեր են խաղում բարոյական գիտակցության, զգացմունքների ձևավորման հարցում: Հեքիաթները հետաքրքիր են երեխաների համար, գրավում են նրանց, հեշտ են և մատչելի, այստեղ կա նաև ֆանտաստիկի այն երանգը, որը բավական բնորոշ է կրտսեր դպրոցականի հոգեբանությանը: Նրանք հաճախ գերադասում են հեքիաթները պատմվածքներից և բանաստեղծություններից, որոնք ևս երեխաների համար են, բայց հեքիաթներում նրանց գրավում է նորությունը, անառօրեականությունը, որոնք հաճախ չեն լինում երկրորդներում: Դա, սակայն, չի նշանակում, որ դպրոցական տարիքի երեխաների ընթերցումներում պետք է հիմնականում տեղ հատկացնել հեքիաթներին, կյանքից վերցված պատմությունները ևս կարևոր և առաջնային նշանակություն ունեն, սակայն դրանք պետք է լինեն հետաքրքիր և գրավեն երեխաներին:

Հեղինակների մի խումբ էլ նշում է, որ գեղարվեստական գրականությունը մեծ նշանակություն ունի դպրոցականների հոգեկանի զարգացման համար: Նրանք նշում են, որ հեքիաթների, պատմվածքների միջոցով երեխաները ծանոթանում են իրենց շրջապատող

[10]Ե. Մնացականյան, Մանկական գրականության կրթաֆունկցիոնալ դերը, Հայ գիրքը և հայ գրականությունը, Երևան, 2013, էջ 187:

կյանքի, տարբեր իրավիճակներում մարդկանց միջև դրսևորվող փոխհարաբերությունների հետ: Գրական հերոսները, նրանց արարքները երեխաների մոտ առաջացնում են հուզական արձագանք և համապատասխան բարոյական գնահատական:[11]

Դասի ընթացքում ուսուցիչը աշակերտների հետ կարող է քննարկել նրանց կարդացած նյութերը, կարծիքներ լսել, բնութագրել այս կամ այն հերոսի քայլը: Այստեղ խիստ կարևորվում են << Հայ գրականության>>դասաժամերը:

<<Հայ գրականության և հայոց լեզվի>> դասաժամերի նպատակներն են.

● ծանոթացնել սովորողներին գրականության նմուշներին, որոնք կարելի է ներառել ժամանակակից դպրոցականի ընթերցողական շրջանակի մեջ,

● հետաքրքրություն ձևավորել գրքի՝ որպես գիտելիքների աղբյուրի նկատմամբ, զարգացնել գիրք կարդալու ցանկություն և սովորություն,

● կատարելագործել սովորողների՝ գրքերն ինքնուրույն ընտրելու և ընթերցելու կարողությունները, այսինքն՝ ձևավորել ընթերցողական արդյունավետ գործունեություն (կարողություն և սովորություն խորհելու գրքի շուրջ մինչև տեքստի ընթերցումը, ընթերցման ընթացքում և ընթերցումից հետո),

● մշակել ընթերցողական մտահորիզոն և դաստիարակել դրական վերաբերմունք գրքի՝ որպես հասարակական արժեքի նկատմամբ»[12]:

Գրականության դասաժամին ընթերցված ստեղծագործությունները՝ հատկապես հայրենասիրական թեմայով գրված, ուղղակիորեն կարող են նպաստել դպրոցականի արժեհամակարգի ձևավորմանը:

Է.Պ. Ալեքսանյանը, խոսելով դպրոցականի մտածողության մասին, նշում է, որ սովորողների շրջանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես հեքիաթները, խորհրդավոր և արկածային գրքերը և այլն: Եվ այս ամենը կարևոր նշանակություն ունի երեխաների մտածողության զարգացման համար: Կարդալով կամ լսելով հեքիաթները՝ երեխաներն իրենց դատողություններն են անում, իսկ դատողությունների միջոցով ձեռք

---

[11] Калмыкова З.И. Продуктивное мышление как основа обучаемости. М.,1981.

[12] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Հ. Խաչատրյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար, մաս 2-րդ, Երևան, 2013, էջ 28:

բերված գիտելիքներն ավելի ինքնուրույն են, խոր և անհատական: Երեխաներին ավելի շատ գրավում են դինամիկ, աշխույժ դեպքերով հարուստ նյութերը: Պատերազմական դեպքերը, քաջությունը, հերոսության, արիության նկարագրությունները նրանց ավելի շատ են գրավում:[13]

Գեղարվեստական ստեղծագործությունները արձակ ու չափածո նյութեր են՝ պատմվածքներ, հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, առածներ, ասույթներ ու թևավոր խոսքեր: Գեղարվեստական ստեղծագործությունների համար սահմանված է մշակման հետևյալ ընդհանուր սխեման՝ ամբողջ-մաս-մաս-ամբողջ. այսինքն՝ նյութը հենց սկզբից ևեթ ուսուցչի կողմից առաջադրվում է ամբողջովին կամ միանգամից, սակայն մշակում է մաս առ մաս՝ նայած նյութի ծավալին, պլանավորումով դրա ուսուցմանը հատկացված դասաժամերի քանակին: Գեղարվեստական ստեղծագործությունների տարատեսակների միջև ևս կան դասավանդման մեթոդական տարբերություններ՝ կապված նյութերի ժանրային առանձնահատկությունների հետ, որոնք նույնպես ուսուցիչը շատ լավ պետք է իմանա, որպեսզի աշխատանքի ընթացքում դրանք հաշվի առնի ու հետևողականորեն գործադրի:

Ի տարբերություն այս ընդհանուր պահանջների՝ հեքիաթն անցնելիս՝ ամփոփման ժամանակ, պետք է բացահայտել հեքիաթի հեքիաթային կողմը, իրականի և երևակայականի սահմանները և երևակայությամբ կամ հեքիաթային ձևով հարցերը լուծելու դրդապատճառներն ու գեղարվեստական հնարները:

Առակն անցնելիս ամփոփման ժամանակ պետք է բացատրել առակի փոխաբերական իմաստը, բացահայտել փոխաբերություններն ու այլաբանությունները, որպեսզի այն ծառայի նպատակին, դաստիարակչական ազդեցություն ունենա, նպաստի խոսքի ու մտածողության զարգացման, չափածո խոսքի առանձնահատկությունների յուրացման վրա:

Այդ նպատակով թույլատրելի պետք է համարել մի քանի անգամ ընթերցելը, խմբովին ընթերցումը, չափածո խոսքի արձակ վերարտադրումը և այլն, որոնք նպաստելու են վերը ասված առանձնահատկությունների յուրացմանը:

[13] Ալեքսանյան Լ.. Պ. ,Կրտսեր դպրոցականների մտածողության զարգացումն արդի պայմաններումե, Երևան, 1987, էջ 118:

Ժողովրդական մանրապատում ստեղծագործությունները՝ առակները, ասացվածքները, հանելուկները, շուտասելուկները որպես այդպիսիք առանձին չեն ուսումնասիրվում, որովհետև այդպես չեն տրված դասագրքերում: Դրանց ուսումնասիրությունը սերտորեն կապվում է հիմնական նյութերի ուսումնասիրության հետ՝ որպես դրանց լրացում կամ դրանց որևէ կողմի շեշտման ընդգծման միջոց: Հետևաբար՝ ուսումնասիրման ընթացքում այնպես պետք է անել, որ դրանք ծառայեն իրենց նպատակներին, ոչ թե հեռացնեն նյութից,այլ կապեն այդ նյութի հետ, լրացնեն և ամբողջացնեն դրա ուսումնասիրությունը:

Ուշինսկին դաստիարակչական առումով հեքիաթը շատ ավելի բարձր էր դասում, քան մանկական գրականության մյուս բոլոր ժանրերը: Եվ այս սկզբունքից ելնելով՝ նա կազմած դասագրքերում մեծ տեղ էր տալիս հեքիաթներին: Հեքիաթները գնահատելի են հատկապես այն առանձնահատկությամբ, որ անմիջական ազդում են երեխայի վրա: Եվ պետք է նշել, որ հեքիաթը մեծ նշանակություն ունի երեխայի մտավոր, խոսքային ստեղծագործական մտածողության զարգացման գործում: Հեքիաթը բնավորությունների և ճակատագրերի ծով է, որից երեխան իրեն դեռևս անծանոթ իրականության ապագայի գծերի մասին (որի շուրջ դեռևս չի կարող խորհրդածել) տեղեկություններ է ստանում: Հեքիաթները երեխայի համար յուրահատուկ աշխարհ են ստեղծում, և հեքիաթի կառուցվածքի մեջ երեխան սեփական երևակայության կառուցվածքն է տեսնում, և որ նա միաժամանակ իր ներսում դա զարգացնում է աշխարհի ճանաչողության, իրականության տիրապետելու համար՝ անհրաժեշտ միջոցներից մեկն ստեղծելով: Ժողովրդական բանահյուսությունը անմիջական ազդեցություն է գործել կրթական դաշտին՝ նպաստելով երեխայի մտավոր, պատկերավոր, գեղագիտական, ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Հեքիաթը, ինչպես նաև մյուս գեղարվես-տական ստեղծագործությունները, երեխային ստիպում են հուզվել, ապրումակցել, ուրախանալ ու տխրել: Հեքիաթի շնորհիվ երեխան ճանաչում է աշխարհը ոչ միայն մտքով, այլ նաև սրտով: Եվ ոչ միայն ճանաչում է, այլև արձագանքում շրջապատող աշխարհի իրադարձություններին ու երևույթներին, արտահայտում իր վերաբերմունքը բարու և չարի նկատմամբ: Հեքիաթը հայրենիքի նկատմամբ սեր դաստիարակելու բարեբեր և ոչ մի բանով չփոխարինվող աղբյուր է:

Գեղարվեստական ստեղծագործությունների բովանդակության վերլուծության շուրջ տարվող աշխատանքների մեջ պիտի բացակայի պատրաստի դատողությունների, կարծիքների

ներկայացումը, ցանկալի արդյունքի կարելի է հասնել միայն անհատական կամ խմբային աշխատանքի շնորհիվ: Փորձը ցույց է տալիս, որ ոչինչ երեխաներին այնպես չի համախմբում, որքան մեկ նպատակի շուրջ զգացմունքային ապրումներով միավորվելը: Այսպիսի մթնոլորտ ապահովվում է մասնավորապես նյութի ընթերցումից առաջ ուսուցչի վարած նախապատրաստական զրույցի միջոցով, որը բացատրական ընթերցանության մեթոդի կարևոր բաղադրամասերից է:

Դասարանում փոքր կամ մեծ խմբերով աշխատելիս միջանձնային առողջ հարաբերությունների առկայության դեպքում գեղարվեստական ստեղծագործությունների՝ անձի զարգացման և արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած դերը դառնում է խմբային գործունեության հիմք հանդիսացող զգացմունքային ապրումների ապահովման պայման:

Գեղարվեստական ստեղծագործության գործող անձանց էությունը ևս օգտագործվում է՝ աշակերտների վրա նյութի ունեցած ներգործությունը ուժեղացնելու նպատակադրումով: Այս խնդրի լուծման համար նախ անհրաժեշտ է արտահայտիչ, հասկանալով ընթերցել նյութն ամբողջությամբ, այն ներկայացնել, օրինակ՝ երաժշտության հնչյունների տակ, դասարանի համապատասխան ձևավորմամբ կամ արվեստի վարպետների կատարմամբ (ձայնագրություններ, տեսագրություններ) և այլն:

Ցանկացած ստեղծագործության հիմնական մտքի ըմբռնման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի արտահայտիչ ընթերցմամբ: Առաջին ընթերցանության ժամանակ, որպեսզի երեխաները ստեղծագործության գաղափարն ամբողջությամբ ընկալեն, ուսուցիչն ինքը պետք է հասկացած լինի ստեղծագործության բովանդակությունը, հերոսների տրամադրությունն ու արարքների տրամաբանությունը, պատկերացնի այն իրադրությունը, տեսարանը, երկխոսությունը, դեպքերը, որոնք նկարագրվում են ստեղծագործության մեջ, և դրանք աշակերտներին ներկայացնի՝ հաղորդելով իր ապրումները, վարակելով երեխաներին իր տրամադրությամբ:

Պետք է կարևորել գեղարվեստական ստեղծագործությունների ճանաչողական արժեքը՝ կրտսեր դպրոցականների մտահորիզոնի զարգացման, հետաքրքրությունների բավարարման, աշխարհայացքի ձևավորման գործում, գիտակցել գեղարվեստական գրականության դերը անձի զարգացման, նրա արժեքային համակարգի ձևավորման գործում: Հանրակրթության առաջին

օղակը անձի զարգացման դպրոց է, այստեղ ձևավորվում և զարգանում են դպրոցականների միտքը, զգացմունքները, հայացքները և այլ՝ ազգային ու համամարդկային որակներ: Այս իմաստով գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների, ձգտումների, արժեքների ճիշտ վերլուծությունը դպրոցականների մեջ որոշակի բարոյական արժեքների ձևավորման, տրամաբանական հետևությունների հանգեցնելու անփոխարինելի միջոց են:

Գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ունկնդրումը, ընթերցումը և դրանց շուրջ դասի ժամանակ տարվող աշխատանքը նպաստում են դպրոցականի արժեքային համակարգի զարգացմանն ու ձևավորմանը:

ԳԼՈՒԽ 2.

Հետազոտական մաս

Հարցաթերթը նպատակաուղղված է ուսուցիչների շրջանում գրականության դասագրքերի արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը :

1. **Ի՞նչ եք հասկանում արժեք ասելով , նշեք դրանք:**



Տրամագիր 1

Վերոհիշյալ հարցին հարցման մասնակից գրականության ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 18%-ը նշել է, որ իրենք կարևոր արժեք են հասկանում, այն ինչը կապված է բարոյական արժեքների հետ՝ ընկերասիրություն, ծնողասիրություն, հայրենասիրություն, այդ արժեքները իրենց համար կարևոր են: 30%-ը նշել է, որ արժեք ասելով հասկանում են հայրենիք,ընտանիք,տուն, քանի որ ամուր ընտանիքից է սկսվում արժեքային համակարգ ունեցող քաղաքացու դաստիարակումը, 28%-ը նշել են, որ իրենց համար արժեք է այն, ինչ կապվում է հարգանքի արժեքների հետ: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել:11%-ը նշել է ճշտապահություն տարբերակը: Այսպիսով ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: <<Երեխան ծնվում է ընտանիքում, հետո դրվում մեր ձեռքերում, որ կոկենք: Նրա համար ո՞վ է աշխարհը ճանաչելու բանալին, ընտանիքում ծնողն է, մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակն ու ուսուցիչը: Երեխան ընտանիքում ծնողի արժեքների կրողն է, իսկ մանկապարտեզում և դպրոցում՝ դաստիարակի և ուսուցչի>>:

2.Ի՞նչ արժեքներ են այսօր անհրաժեշտ աշակերտներին:



Տրամագիր 10

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ <<Հայ գրականության>> դասագրքերում ներառված դասանյութերը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Այսպիսով՝ ամբողջացնելով մասնակիցների պատասխանները, կարող ենք եզրակացնել, որ գրականության դասագրքերում ներառված դասանյութերը սովորողների մոտ ձևավորում են բազմաթիվ կարևոր արժեքներ:

Հետազոտվող ուսուցիչների մեծամասնությունը՝ 33%-ը, պնդում է, որ <<Հայ գրականության >> դասագրքում մեծ տեղ է հատկացվում հայրենասիրական և աշխատանքային դաստիարակությանը, մասնակիցների մյուս մասը՝ 23%-ը առանձնացրել է բարոյական դաստիարակությունը: Դասագրքում տեղ են գտել 20% նաև այնպիսի դասանյութեր, որոնք նպաստում են ընտանեկան, ֆիզիկական, գեղագիտական, բնապահպանական դաստիարակության ձևավորմանը: Այսպիսով՝ ուսումնասիրելով ուսուցիչների պատասխանները, կարող ենք հասկանալ, որ դասագրքում մեծ տեղ է տրված հայրենասիրական, աշխատանքային և բարոյական դաստիարակությանը: Ուսուցիչները պետք է գիտակցեն և դաստիարակեն այնպիսի աշակերտներ, որոնք կունենան համամարդկային արժեքներ և կդաստիարակվեն աշխարհաքաղաքացի:

3. Հայ գրականության դասագրքերը արդյո՞ք հնարավորություն են ընձեռում արժեքների ձևավորման համար:



Տրամագիր 11

Հետազոտությանը մասնակցող գրականություն դասավանդող ուսուցիչների մեծամասնությունը՝ 78%-ը պնդում է, որ դասագրքում առկա են բազմաթիվ դասանյութեր, որոնք նպաստում են, հնարավորություն են ընձեռում սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը: Վերլուծելով մասնակիցների նշված պատասխանները՝ կարող ենք եզրակացնել, որ նրանց կողմից առանձնացվել են այն դասանյութերը, որոնցում նկարագրվում, բնութագրվում է բնությունը, գեղեցկությունը, մասնակիցների մյուս մասն էլ նշում է, որ դասագրքի յուրաքանչյուր էջում էլ կան նյութեր, որոնք ունեն գեղագիտական նշանակություն և սովորողների մոտ ձևավորում են գեղագիտական ճաշակ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի դպրոցականի հոգևոր և բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ձևավորման գործում:

2. Դպրոցը պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը՝ երեխաների մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ և այլն:
3. Մեր իրականության մաս կազմող արժեքները՝ հոգևոր և նյութական, ամուր հենարաններ են, որոնք երեխային, որ վաղվա քաղաքացին է, օգնելու են պայքարելու կյանքի հարուցած խոչընդոտների դեմ, դիմակայելու ստեղծված փորձություններին, հաղթահարելու անելանելի թվացող դժվարությունները:
4. Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար: Դրանց միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի հերոսներին: Ստեղծագործությունները ուղղակիորեն ազդում են երեխաների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում են նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:
5. Ցանկալի արդյունքի հասնելու համար ստեղծագործությունների ուսումնասիրումը պետք է իրականացվի ճիշտ ու նպատակային ընտրված մեթոդների միջոցով:
6. Երեխաների հետ աշխատելիս ուսուցչի գերխնդիրն է յուրաքանչյուրին սովորեցնել ճանաչել ու սիրել հայրենիքը՝ ուժերի հնարավորության չափով նպաստ բերելով նրա բարգավաճմանը:

Հետազոտական աշխատանքն ավարտենք հետևյալ խոսքերով. <<Մեր ժողովրդի ապագան , ժողովրդի հարատևման միակ նախապայմանը նրա մտավոր ներուժն է, և առաջին հերթին՝ ուսուցիչը: Եվ բավարար կենսապայմաններ պետք է ապահովել ուսուցչի համար, այլապես կվտանգենք մեր ապագան>>:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1950:
2. Ալեքսանյան Լ.. Պ. Դպրոցականների մտածողության զարգացումն արդի պայմաններում, Երևան, 1987:
3. Ամիրջանյան Յու. Ա. , Ա. Խ. Սահակյան «Մանկավարժություն», Երևան, 2005:
4. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015:
5. Թորգոմյան Լ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Երևան, 2009:
6. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Խաչատրյան Հ., 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար, մաս 2-րդ, Երևան, 2013:
7. Թոփուզյան Ա., Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավար-ժության մեջ, Երևան, 2009:
8. Խուդոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, 2004,
9. Մնացականյան Ե., Մանկական գրականության կրթաֆունկցիոնալ դերը, Հայ գիրքը և հայ գրականությունը, Երևան, 2013:
10. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Մայրենի 2, Երևան, 2013:
11. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:
12. Տեր-Գրիգորյան Ա. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
13. Տոնոյան Ա., Կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի բաղադրատարրերը, Նախաշավիղ, հմ. 8, Երևան, 2010: